

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԴՐՔԵՐԻ ՍՏԵՂՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ա. ԴԱՐՈՒՅԱՆ

Դանիել Վարուժանը, շնայած իր կարճատև կյանքին, մեր գրականությանը թողել է բանաստեղծական հարուստ ժառանգություն, նաև արձակ ու հրապարակախոսական էջեր, մեծարժեք նամակներ:

Վարուժանի (Դանիել Չուպուդբեարյան) ստեղծագործության մասին շատ է գրվել և այդ բոլորի մեջ պարզապես հիշվում է, թե նա հրատարակել է 4 ժողովածու՝ 1906, 1909, 1912 և 1921 (Լեոնիդ Սոսուկինի տպագրված) թթ.: Մյուս գրքերի, ժողովածուների մասին գրեթե չի հիշվում:

Վերջին տարիներս Հայաստանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը բանաստեղծի հարազատներից ստացել է Վարուժանի հարուստ արխիվը, որը լրացվել է բազմաթիվ նոր նյութերով: Այդ արխիվը հնարավորություն է ընձևում մեզ՝ հաստատելու կամ ժխտելու Վարուժանի մասին եղած նախկին տեղեկությունները:

Արխիվային նյութերը մեզ հիմք չեն տալիս հավատալու հուշագրողների ու քննադատների հայտնած այն ենթադրություններին, թե Վարուժանը զրչափորձերն սկսել է Սաղարդ-Աղաճ թաղամասի նախակրթարանում սովորելու տարիներին (1896—1898), այդ տարիներին կազմակերպված հայկական ջարդերի տպավորության տակ: Ճշմարտությունն այն է, որ առաջին զրչափորձերն արվել են 1900-ից հետո, այսինքն այն ժամանակ, երբ Դանիել Չուպուդբեարյանը սովորում էր Մխիթարյան միաբանության Քաղկեդոնի վարժարանում: Արխիվում պահվում են այդ տարիների ձեռագրերը, որոնցից հեղինակը կազմել է ժողովածուներ, իսկ բանաստեղծությունների տակ գրել գրության թվականները, որոնք հաստատում են, որ նրա ամենաառաջին բանաստեղծությունները («Սիրերգ», «Երգ», «Քնարի հեծկտուքներ» և այլն) գրվել են 1901 թ.: Այդ ենվկայում նաև հետագայում Վարուժանի կողմից գրված ինքնակենսագրական հետևյալ տողերը. «Առաջին երգերս սեր եղած են»¹ (ինչպես տեսնում ենք՝ սեր և ոչ թե ջարդերի տպավորությամբ գրված գործեր): Այդ նույն ժամանակ Դանիել Չուպուդբեարյանը ուրիշ զրչափորձեր էլ է արել. հայտնի է նրա «Թատրոնի շուրջ» հոդվածը, որ տպագրվել է Պոլսում լույս տեսնող «Լեոնիդյան արխիվ» հայատառ թուրքերեն թերթում 1902 թ.:

Սակայն Չուպուդբեարյանի առաջին տպագիր խոսքը մեկ տարի առաջ էր եղել: 1901 թ. Վենետիկի Մխիթարյանների 200-ամյա (1701—1901) հոբելյանի առթիվ լույս տեսած «Հիշատակարան» տարեգրքում² տպագրվեց նաև Քաղկեդոնի Մխիթարյան վարժարանի ուսանող, բրգնիկցի Դանիել Գ. Չուպուդբեարյանի ողջույնի նամակը:

¹ Դ ա ն ի ե լ Վ ա Ր Ո Ւ Ժ ա ն, Նամականի, Երևան, 1965, էջ 194 (Նամականիից բերված օրինակների էջերը այսուհետև կնշենք տեղում):

² «Հիշատակարան Մխիթարյան հոբելյանիս», Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 149:

Իսկ առաջին բանաստեղծությունը տպագրվում է միայն 1904 թ.³, երբ նա սովորում էր Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Այդ է հաստատում նաև ինքը՝ Վարուժանը. «Հոն էր, որ առաջին անգամ քերթված մը «Ալիշանի շիրմին առջև» հրատարակության կուտայի «Բազմավեպին» մեջ» (էջ 207):

1900—1902 թթ. Չպպուդքեարյանի մի քանի բանաստեղծություններ հրատարակվում են աշակերտական «Արձագանք մոտայի» ձեռագիր թերթում: Աշակերտների և ուսուցիչների հիացական ու քաջալերիչ խոսքերից ոգևորված Դանիել Չպպուդքեարյանը որոշում է տպագրության ներկայացնել բանաստեղծությունների մի ժողովածու: Վարուժանի արխիվում պահվում են այդ անդրանիկ ժողովածուի սևագիր և մաքրագիր ձեռագրերը:

Ժողովածուն վերնագրված է «Ծաղկեփունջ կամ բրդնիկցիի մը նվաղները», հեղինակ Դանիել Գ. Չպպուդքեարյան, Կ. Պոլիս, 1902 թ.: Կա «Ծաղկեփունջի» երկու սևագիր և մեկ մաքրագիր տետր: Առաջին սևագիր տետրում կա Ա—ԺԲ թվարկումով 12 ոտանավոր, որ հեղինակը «Երգ» է անվանել և մի ձևով ուղղված Սեբաստիայի թեմի առաջնորդ Տեր Սահակ արքեպիսկոպոս Հաճյանին: Իր երախայրիքը Սահակ Հաճյանին նվիրելը պատանի բանաստեղծը պատճառաբանում է այսպես. «Կուգամ շնորհավորիլ Ձեր ձեռնարկներուն հաջողությունն և փոխարինել ձեր երախտաց առաջին երախայրիքովս»: Իսկ ի՞նչ ձեռնարկներ էին դրանք: Հաճյանը Սեբաստիայում սկսել էր կրթական, մշակութային լայն գործունեություն ծավալել: Նրա ջանքերով էր, որ կառուցվեց բանաստեղծի ծննդավայր Բրդնիկ գյուղի դպրոցի նոր շենքը: Հատկապես այս է մղել նրան՝ երախտի խոսք ասել: Վարուժանի ձեռագրերում կա «Երուդիս դպրոցը»⁴ վերնագրով մի արձակ բանաստեղծություն-խոհ (գրված 1903 թ. նոյեմբերին, անտիպ), որ բացատրում է վերոբերյալ ընծայականը:

Վարուժանի «Ծաղկեփունջը» բաղկացած է 12 ծաղկից, 12 ոտանավոր, հետևյալ հաջորդականությամբ՝ «Դափնե վարդ», «Շուշան», «Մեխակ», «Հասմիկ», «Նարդիդ», «Անմոռուկ», «Լեյլակին կյանքը» (առ հայ օրիորդս), «Հակինթ», «Կուսածաղիկ», «Վարդ», «Մանուշակ», «Խնձոր-ծաղիկ»:

«Ծաղկեփունջ կամ բրդնիկցիի մը նվաղները» ժողովածուի 2-րդ տետրը մաքրագիր է: Այստեղ կա նաև Քաղկեդոնի վարժարանի տնօրեն Արիստակես Քասգանդիլյանի փոքրիկ առաջաբան-հանձնարարականը: Քասգանդիլյանը նաև խմբագրել է զիրքը: Ժողովածուն պատրաստ է եղել տպագրության, կրնքված և մակադրված-հաստատված է Պոլսի դրաքննության կողմից:

«Ծաղկեփունջի» մաքրագիր տետրը բաժանված է 2 մասի՝ Ա և Բ: Ա մասում ծաղիկներին ձեռնված վերոհիշյալ երգերն են, իսկ Բ մասում, որը կիսատ է, «Մայիս» բանաստեղծությունը և «Գարնան երեկոները Մոտայի մեջ» արձակ բանաստեղծությունը:

Սակայն կա նաև 3-րդ տետրը (սևագիր 2-րդ), որը վերնագրված է Բ մաս: Անշուշտ, հենց այս սևագիր բանաստեղծություններն են կաղմել «Ծաղկեփունջի» Բ մասը, որը մաքրագրում կիսատ էր: Այս տեսակետը հաստատում են

3 «Բազմավեպ», Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 244:

4 Նույն տեղում, 1936, № 8—12, էջ 402:

5 ՀՍԽՍՀ Ե. Չարենցի անվան զրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դ. Վարուժանի ֆոնդ, № 1, 2, 3:

6 Նույն տեղում, № 39:

երկու փաստ: Նախ՝ սեպհիր տետրում կա մաքրագրում տեղ գտած «Մաշիա» բանաստեղծությունը: Այսպես՝ մաքրագրում եղել են այդ բանաստեղծությունները ուրիշի ձեռքով արտագրված, սակայն ինչ-որ մեկը հետագայում մեղադրվել կրտսրել է այդ էջերը, պատճառաբանելով, թե «Վարուժանի ձեռագիրը չէ, հետևաբար անարժեք է»: Կտրված թերթերի հիմքերի վրա մնացած սկզբնատառերի համեմատությամբ պարզվում է, որ դրանք սեպհիր 2-րդ տետրի բանաստեղծություններն են եղել մաքրագրված:

Բանն այն է, որ այդ «ուրիշի ձեռագրով» էջերը գրվել են ոչ թե հետագայում, այլ նույն ժամանակ և Վարուժանի գիտություններով: Նախ, դրանք սկսվում են հենց «Գարնան երեկոները Մոտայի մեջ» արձակ բանաստեղծության կեսից (և թե «Ծաղկեփունջը» միայն Վարուժանի ձեռագրով լինել, ինչու՞ պիտի նա բանաստեղծությունը կիսատ թողնել): Այս, ինչպես վերևում ասացինք, տետրակի բոլոր թերթերը կնքված են գրաբնության կնիքով. և այդ կնիքը կա նաև «ուրիշի ձեռագրով» էջերի վրա (բարեբախտաբար կտրված էջերի հիմքերի վրա երևում է կնիքը):

Ամենայն հավանականությամբ Չպպուզբեարյանի մտերիմ ընկերներից մեկը օգնել է նրան, արտագրելով այդ էջերը:

Որ ժողովածուն ընդգրկել է նաև սեպհիր 2-րդ տետրից «ուրիշի ձեռագրով» արտագրված սիրո և բնության մասին բանաստեղծությունները, վկայում են ոչ միայն կնիքի հետքերը, այլև տետրի սկզբում պետեղված ձոներ և գրքի վերնագիրը:

Սահակ Հաճյանին ուղղված իր ընծայականում հեղինակը գրում է. «Մոտայեն ներշնչված երգեցի թե՛ տխուր և ղվարթ, թե՛ ժպիտով ու աբեցունքով. հոգիս մանուկ զգացումներով, սիրտս ալ անկեղծ սիրով մ'առյցյալ երգեցի պահ մը...»:

Եվ վերջապես վերնագիրը: Ոչ թե միայն «Ծաղկեփունջ», այլ «Ծաղկեփունջ կամ բրդնիկցիի մը նվագները»: Կուպիտ բաժանումով՝ «Ծաղկեփունջը» և մասի ծաղիկների մասին երգերն են, «նվագները»՝ Բ մասի սիրո և բնության երգերը:

Այսպիսով, 1902 թ. 18 տարեկան հասակում, Դանիել Չպպուզբեարյանը կազմել է իր առաջին ժողովածուն, սակայն ինչ-ինչ պատճառներով այն լույս չի տեսել:

1902—1905 թթ. Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում սովորելու տարիները բեղմնավոր եղան նաև ստեղծագործական տեսակետից: Չպպուզբեարյանը դրեց բազմաթիվ նոր բանաստեղծություններ, արձակ խոհեր, նաև դյուցազնապոեմ: «Ծաղկեփունջը», որ Քասգանդիլյանը բնորոշել էր որպես «երիտասարդ, բայց խոստմնալից մտքի մը առաջին թերթերը», այլևս չէր բավարարում խոստապահանջ հեղինակին: Դեռևս ժողովածուն կազմելիս էլ նա այն համոզմանն էր, թե իր զգացումները բանաստեղծական կատարյալ մարմնավորում չեն ստացել. «Բայց գրիչս—գիտեմ—չի կրցավ կատարյալ կերպով ի հայտ ածել այդ սերն ու զգացումը, զի տակավին թերավարժ է նա. տակավին ձեռքիս մեջ դասագիրքն ունիմ և մատներուս վրա մեկանի բիծեր»:

Շուրջ երկու տարի Վարուժանը ժողովածուով հանդես գալու փորձ չի անում: 1904 թ. «Բազմավեպում» լույս են տեսնում «Բանաստեղծ-նահապետի շիրմին առջև» բանաստեղծությունը և «Եվկիտ Տոնել» դյուցազնապոեմը, որոնք արժանանում են ընկերների, ուսուցիչների ջերմ վերաբերմունքին: Հեղինակը նա-

մականեր է ստանում տարբեր տեղերից, որոնց մեջ շնորհավորում են նրա հաջողությունը (Լժ 217, 234)։

Այս պարագան էլ թերևս խթան է դառնում, որ 1904 թ. ուշ աշնանը Չպպուգբեարյանը կաղմի իր երկրորդ ժողովածուն։ Սկզբնապես հեղինակն այն անվանել է «Մրկահույզ կայծոռիկներ»։ Բայց քանի որ ժողովածուի բանաստեղծությունների մեծ մասը հեղինակը կրկին մշակում է, ուստի կրկին արտադրում է դրանք մեկ ուրիշ տետրում։ Այս նոր տետրում, որ մաքրագիր մի ժողովածու է, գետեղում է նախորդի ոչ բոլոր բանաստեղծությունները, այլ ընտրությամբ և նոր դասավորությամբ։ Գտնում է նաև նոր վերնագիր՝ «Փուշի ակոսներ»։ Հեղինակ Գ. Չպպուբեար, 1904 թ. Վենետիկ։ Այս ժողովածուում տեղ են գտել 55 բանաստեղծություններ։ Բոլոր բանաստեղծությունների տակ նշված են գրության թվականները և հեշտ է տեսնել, որ դրանք մեծ մասամբ 1903—1904 թթ. են գրվել։ Ժողովածուում տեղ են գտել նաև 1901 և 1902 թվակիր բանաստեղծություններ։ Նախորդ «Մաղկեփունջ» ժողովածուից այստեղ դրել է մի քանի սիրային բանաստեղծություններ, իսկ ծաղիկների մասին երգերից միայն մեկը («Մանուշակ»)։

Սակայն երիտասարդ բանաստեղծը «Փուշի ակոսներն» էլ հրատարակության չի տվել։ Իսկ երբ 1905 թ. մամուլում նրա բանաստեղծական տաղանդի մասին կարծիքներ են հայտնել այնպիսի մտավորականներ, ինչպես Վ. Թեբեյանն ու Ա. Արփիարյանը, Չպպուգբեարյանը կաղմել է նոր ժողովածու։

Ժողովածուն կաղմում է ընտրությամբ, բացառապես 1903—1905 թթ. գրված բանաստեղծություններից և ներկայացնում է Ս. Ղազարի հրատարակչական մարմիններին՝ տպագրության։ Այդ ժողովածուի մաքրագիր տետրի կաղմի վրա գրված է՝ Դանիել Վարուժան, «Սարսուռներ», Վենետիկ, 1905։ Իսկ երկրորդ էջում՝ «Սարսուռներ», 1903—1905։ Իսկ թե քանի բանաստեղծություն է եղել Վարուժանի ներկայացրած այդ ժողովածուում, հայտնի չէ, որովհետև «Սարսուռների» մի շնչին մասը միայն լույս տեսավ առանձին գրքով, իսկ մաքրագիր այդ տետրակից կտրված, հանված են այն էջերը, որոնք դուրս էին մնացել տպագրված գրքից։ Հայտնի է, սակայն, Վարուժանի տրտունջք-զայրույթը այդ գրքի աղճատման համար։ «Մեծ ցավով կրսեմ, սիրելի հայր,— գրում է նա Ս. Սարյանին ուղղված նամակում,— թե վաղ քերթվածներուս հրատարակությունն այլանդակեց. վերջերս տպարանատերեն նամակ մը ստացա, նամակ այնքան ջլատիչ, որ կարող էր ամեն բանաստեղծություն բանաղեղծության փոխել. միայն քանի մը քերթված առանձին գիրք ըրեր են որ հաղիվ 50 էջ կրլա» (Լժ 41)։ Ամենայն հավանականությամբ, Վարուժանը «Սարսուռների» ձևագիր ոչ թե մեկ տետր է ներկայացրել Ս. Ղազար, այլ երկու։ Այդ են վկայում Աթանաս Տիրոյանին ուղղված մի նամակի հետևյալ տողերը. «Կգրեք, թե հոգտեղի քերթվածներես միայն երեք հատ ոչ «Գեղունի» մեջ, ոչ ալ «Բաղմավեպր» տպած է։ Ես ընդհակառակը, կարծեմ 10 կտոր կլլա, վասնզի ամբողջ 2-րդ տետրակեն (որուն մեջ Տոնկը) հաղիվ 3—4 հատ է հրատարակված» (Լժ 47, րնդգծումը մերն է—Վ. Գ.)։ Իսկ Չոպանյանին գրում է. «Կեսեն ավելին—կրնամ րսել լավ մասը— հրատարակվեցավ» (Լժ 55)։ «Սարսուռներ» գրքում տպագրվել է 18 բանաստեղծություն (ձևագրի առաջին տետրի 78 էջից տպագրված է միայն 54-ը, պարզ չէ, թե մնացած 24 էջում, որ կտրված է, քանի բանաստեղծություն է եղել), չի տպագրվել ներկայացրածի, բայց իր վկայությամբ, «կեսեն ավելին», նշանակում է ներկայացվել է շուրջ 40, կամ քիչ ավելի բա-

նաստեղծություն: Այդ տեսքով, անշուշտ, գիրքը ավելի ամբողջական կլիներ, քան եղավ: Ելնելով «Սարսուռների» այս նախապատմությունից, պիտի ասենք, որ «Փուշի ակոսներ» ձևագիրը ժողովածուն (55 բանաստեղծությամբ) չէ, որ ներկայացվել է տպագրության «Սարսուռներ» վերնագրով, ինչպես ենթադրվել է վերջին տարիներս գրված մի հոդվածում⁷, քանի որ «Սարսուռներ»-ում միայն 1903—1905 թվակիրներն են ու նաև այնպիսի պորժեր, որ չկան ո՛չ «Մերկա-հույզ կայծոռիկներում», ո՛չ էլ «Փուշի ակոսներում»:

Վերը բերված թվերից կարելի է ենթադրել նաև, որ Վարուժանի ներկայացրած ձևագիրը «ստվար» չի եղել և ամենայն հավանականությամբ նրա մեջ չեն եղել «Սիրերդ», «Խաբուսիկ սեր», «Քնարի հեծկյտուրներ» սիրային բանաստեղծությունները, ինչպես ասված է «Կամակամու» առաջաբանում (էջ 6—7):

Կարելի է ենթադրել, որ «Փուշի ակոսներից» բնութագրված և նոր բանաստեղծություններով կազմված «Սարսուռներ» ժողովածուն, Վարուժանի մտադրվել էր մնացած բանաստեղծություններից կազմել (կամ արդեն կազմել էր) ևս մի ժողովածու, և լույս ընծայել միաժամանակ: Ըստ Երևույթին այդ բանը նրան խոստացել էր Ս. Երևանյանը: Այս մասին փաստեր շատ չունենք, Վարուժանի արխիվում չի պահպանվել նման ձևագիր, սակայն Աթանաս Տիրոյանի՝ Վարուժանին 1905 թ. դեկտեմբերի 23-ին հղած նամակը հնարավորություն է տալիս նման ենթադրությունների: «Ուստի այս պրածես կհասկնաս, թե ես որքան ձեռնահասություն կրնամ ունենալ այն խնդրոց մասին, որ կը վերաբերին քու համով-հոտով գրած «Սարսուռներ»-ը և «Մաշած լար»-ը տպագրելուն. այսինքն ոչինչ ձեռնահասություն:— Այսուհանդերձ զքեզ զոհացնելու նպատակով (այսինքն գրած պայմաններովդ այդ երկու քուրիկ-հատորիկներդ տպագրելու մասին) խոսեցա տպագրապետին հետ, և լեզվես ու սրտես բխած անուշիկ հորդորներով ուղեցի իրեն կամքը հակեմ իմ և քու փափագածիդ... Ես իրեն ըսածեն այնպես հասկեցա, ինչ որ դուք ալ գրեք ես, այսինքն թե գուցե Վ. Հ. Սիմոն Երևանյան այդ մասին զքեզ շատ լավատես րբեր է. մինչդեռ տպագրապետն ալ իրեն տպարանական արվեստին հաշիվներն ունի... Սիմոն Երևանյան դեռ չեմ տեսած, որ խոսիմ...» (էջ 228):

«Սարսուռներ» և «Մաշած լար», «Երկու քուրիկ հատորիկներ» տպագրելու ցանկությունը հաստատ է եղել, իսկ թե երկրորդը լույս որոշում է եղել, թե՛ արդեն կազմված ժողովածու, հայտնի չէ: Իսկ քանի որ ոչ թե «Փուշի ակոսներն» է ուղարկել, այլ առանձնացված «Սարսուռները», թերևս ուղարկել է նաև մյուսը՝ «Մաշած լարը»:

Ա. Տիրոյանին ուղղված նամակի մեջ հիշատակված «Երկրորդ տետրակը» («չնորհ ընեիք տետրակներս ինձի ուղարկել») գուցե և հենց այդ «Մաշած լարն» էր, կամ գուցե, ինչպես ասել ենք, «Սարսուռների» շարունակությունը:

Այսպես ուրեմն, 1905 թ. աշնանը Դանիել Վարուժանը իր 1903—1905 թթ. գրված բանաստեղծություններից կազմում է «Սարսուռներ» վերնագրով մի ժողովածու (շուրջ 4 տասնյակ գործ) և ուղարկում Ս. Ղազարի մամուլի վարչությանը: Այդ պրքի վրա առաջին անգամ Դանիելը Չպլուզդրեարյան ազգանվան փոխարեն դնում է Վարուժան ծածկանունը: Հենց այդ ժողովածուից ընտրված մի քանի բանաստեղծություններ էլ «Բազմավեպի» 1905 թ. նոյեմբերյան հա-

7 «Սովետական գրականություն», 1974, № 4, էջ 108:

մարում (էջ 514) լույս են տեսնում առաջին անգամ Դ. Վարուժանի ստորագրությունը: Այնուհետև ստորագրում է միայն Վարուժան:

Այդ ժողովածուից Սիմոն Երևմյանը «Բաղմավեպ» ամսագրում և «Գեղունի» տարեգրքում տպագրում է բաղմավիվ բանաստեղծություններ:

«Բաղմավեպի» նույնամյակի համարում տպագրվում են «Խաչին», «Նստատակին»⁸ (էջ 523) և «Հիսուսի պաճուճապատանր» (էջ 518), իսկ ղեկավարության համարում՝ «Թողեք մեծնամ» (էջ 566) և «Անցնող տարին» (էջ 573) բանաստեղծություններ:

Դարձյալ Վարուժանի ստորագրությամբ «Գեղունիում» այդ զրքից տպագրվում է մի մեծ շարք: Երևմյանի միջնորդությամբ («Ըստ բաղձանաց հ. Սիմոն վարդապետի») տպարանապետ Սուքիաս էփրիկյանը «Գեղունի» այդ շարվածքներից տպագրում է առանձին մի զրքույկ, 500 օրինակ տպաքանակով, տեղեկացնելով, թե որոշել է 300 օրինակը տալ հեղինակին, իսկ 200-ը պահել թիքի վարձք թողթի և զիրք ձևացնելու տպարանական ծախսուց: Այս նամակում էփրիկյանը հիշեցնում է նաև, թե «Բաղմավեպի» շարվածքներից «առանձին տպելու թույլտվություն» չի կարողացել ստանալ:

Նվ գրքի աղճատված ձևով տպագրությունը, և՛ տպաքանակի հարցը շատ են հույսել բանաստեղծին: Նա իր վրդովմունքն ու զայրույթն է հայտնել ինչպես էփրիկյանին, այնպես էլ իր մտերիմներին՝ գրած մի շտրք նամակներում (էջ 45, 55, 57):

Ի վերջո էփրիկյանը (ազդված Վարուժանի նամակից) նրան է ուղարկում բոլոր 500 օրինակները, պահանջելով միայն 60 ֆրանկ: «Տպագրությունը և շարելը ձրի համարելով կամ իբրև վարձք Ձեր «Գեղունի» աշխատակցության, թողթի և այլ ծախսուց փոխարեն համարելով այդ 60 ֆրանքը» (էջ 22):

Նվ ահա լույս է տեսնում զրքույկը, որի առաջին էջում գրված էր. Սարսուռնե, Բնաբան բանաստեղծություն, Երգեց Վարուժան Գանիել, Վենետիկ—Ս. Վազար, 1906 թ.: Իսկ մյուս էջի վրա՝ «Կր ձոնեմ խորին երախտադրությամբ Մուրատ և Ռափայել բարերարներու անմահ հիշատակին»: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ 18-ամյա Վարուժանը իր անտիպ ժողովածուն՝ «Մաղկևիությունը», նվիրել էր իր ծննդավայրում կրթական գործի անխոնջ երախտավոր Սահակ Հաճյանին, իսկ «Սարսուռները»՝ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի հիմնադիր բարերարների հիշատակին: Սա ուսումնածառավ աշակերտի և՛ երախտիքի, և՛ կրթության մեծ զերի խոր գիտակցության վկայությունն է:

«Սարսուռները» զիրքը (18 բանաստեղծությամբ) լույս տեսավ 1906 թ. փետրվարին: Փետրվարի 16-ի նամակով էփրիկյանը հայտնում է. «Այսօր ղրկեցինք «Սարսուռներու» ամբողջ 500 օրինակը» (էջ 236) և զրքույկի վրա էլ գրված էր 1906 թ.: Սակայն ճշմարտությունն այն է, որ 1905 թ. ղեկավարին այն արդեն տպագրված էր: Դեկտեմբերի 21 թվակիր նամակում էփրիկյանը գրում է. «Ստանավորներդ «Գեղունի»-են առանձին հանված տպված են» (էջ 226), իսկ 1905 թ. հունվարի 4-ի նամակում հարցնում է. «Գրեցեր, նաև թե ինչ արագությամբ կուզեք որ ղրկեմ արկղը» (էջ 228): Իսկ ինչու 1905-ի վերջին տպագրված զիրքը թվագրված է 1906, և ինչու են այն ուշ ուղարկել հե-

⁸ Այս բանաստեղծությունը «մովետական գրականություն» ամսագրի 1974 թ. ապրիլյան համարում թյուֆիմադարար ներկայացվել է որպես անտիպ:

ղինակին: Մեղ օգնում է դարձյալ էփրիկյանի նամակը, որի մեջ բացատրված է. «Մտանալորեներդ «Գեղունի»-են առանձին հանված տպված են... Սակայն օրինակները Ձեր տրամադրության ներքո կղրվին «Գեղունի»-ի լույս տեսնելն Ձ ամիս վերջ, որ է ըսել փետրվարի մեջ» (էջ 226): Ասել է՝ այն ժամանակ, երբ «Գեղունին» կհասնէր բաժանորդներին, ամբողջովին կսպառվեր:

Ս. Ղազարի մամուլի վարչությունը, ղեկավարվելով հրատարակչական-գրքամական հաշիվներով, մոռացել էր այն հանգամանքը, որ ժամանակագրական սխալ է թույլ տալիս, իսկ հիշյալ ժամանակահատվածը բանաստեղծի ստեղծագործական պատմության մեջ քիչ ժամանակ չէ: Եթե նույնիսկ երկու ամիս հետո պետք է գիրքը տրվեր հեղինակին, ապա 1905 թ. տպագրված գրքի վրա պետք է նշվեր հենց այդ թվականը:

Հետաքրքիր է նշել, որ երբ հետադայում (1911 թ.) վարուժանը (Մարութան Պարսամյանին գրված նամակում) խոսում է իր գրքերի մասին, «Սարսուռների» հրատարակության թվականը համարում է 1905-ը (էջ 195): Գրքույկում տեղ գտած բանաստեղծությունները գրվել են 1903—1904 թթ. (փաստ, որ դրանք բոլորն էլ կան 1904 թ. կազմած «Փուշի ակոսներում»): Ճիշտ է, վարուժանը ներկայացրել էր նաև շատ գործեր, գրված 1905-ին, սակայն գրքում մնացել են գրեթե միայն 1903—1904 թվակիրները: Այս ամենից հետևում է, որ վարուժանի ստեղծագործության զարգացման փուլերը քննելիս մենք «Սարսուռները» պետք է համարենք մինչև 1905 թ. (ամենաուշը՝ 1905-ի մայիս) ընկած շրջանի արգասիք (ասել է՝ վենետիկյան տարիների արդյունք):

Իսկ ինչու՞ վարուժանի երախայրիքը լույս աշխարհ չեկավ այնպես, ինչպես հեղինակն էր կամենում: Այս հարցին դարձյալ պատասխան է տալիս «Նամականին»: Որքան էլ էփրիկյանն ու մյուս Մխիթարյանները ջանացել են վարուժանի գրքի ազատված տպագրությունը բացատրել տպագրական-հրատարակչական հանգամանքներով, այնուամենայնիվ ճշմարտությունը մնում է այն, որ Ս. Ղազարի վանահայրերը հատուկ ընտրությամբ են հրատարակել գրանք, ոչ միայն առանձին գրքում, այլև նույնիսկ մամուլում: Պարզապես նրանք խուսափել են այն քիչ թե շատ ըմբոստ տրամադրություններից, աշխարհիկ ասորումներից, որ կային վարուժանի ներկայացրած շարքում: Այդ բանը իր ժամանակին հասկացել է հեղինակը և գրել է ընկերներին հղած նամակներում. «Կեսնն ավելին — կրնամ ըսել լավագույն մասը — չհրատարակվեցավ շնորհիվ (թող ուրիշ պատճառները) վանքի մամուլին կուսակրոնության և կուսագրության» (էջ 55), — սա Չոպանյանին գրած բացատրությունն է, իսկ Թեքեյանին հետևյալը. «Վանքը շուրջ հրատարակել անոնց շեշտերը զայնակղեցուցիչ զրանալով իր [հնադարյան կուսության] և պահպանողականության» (էջ 57):

Ամենայն հավանականությամբ «Սարսուռների» տպագրության ժամանակ վեճեր են եղել վենետիկի հայրերի և հեղինակի միջև: Առաջարկված պայմանները հավանաբար խիստ ծանր են եղել, որ տղայն զայրացրել են վարուժանին. «Գեղունի»-ի և «Բազմավելու»-ի մեջ հրատարակել վերջ — մոտերս — առանձին հատոր պիտի կազմեն «Սարսուռներ» խորագրին տակ, — գրում է նա Չոպանյանին 1905 թ. դեկտեմբերին, — բայց ինչ նախճիրով և ինչ (ղեռ ենթադրելի) պայմաններով ցավալի է ըսելը» (էջ 37):

Հստ երևույթին վեճեր են եղել նաև տպագրությունը տնօրինող հայրերի մեջ: Այդ են վկայում վարուժանի ընկերոջ՝ Գարեգին Տյուրկերյանի նամակի հետևյալ տողերը. «Կարմանամ շատ մը ոտանալորներդ շտպվելուն. զեռ

ավելի, ղարմացա, երբ մեծ հայրը «Փառք տա այդչափին ալ» րսավ մտածկոտ ժպիտով մը» (էջ 240)։

Ծիշտ է, Վարուժանը շատ էր դժգոհ իր առաջին գրքի աղանատման համար, բայց երբ մամուլը և բարեկամները անմիջապես արձագանքեցին՝ հայտնելով իրենց հիացումը, նա ինչ-որ չափով խաղաղվեց։ Իսկ առաջին արձագանքողները եղան Չոպանյանը, Արիփարյանը, Թեքեյանը։ Նախ «Բավմավեպում» ու «Գեղունիում» տպագրված գործերի, ապա «Սարսուռներ» գրքի առիթով նրանք նամակներով շնորհավորեցին Լրիտասարդ Բանաստեղծի հաջողությունը, այնուհետև վերլուծական էջեր հրապարակեցին մամուլում։

1905 թ. «Բաղմավեպի» օգոստոսյան համարում լույս էր տեսել «Վաղվան բողբոջները» (գրված հուլիսի 7-ին), իսկ 1906-ի մարտին արդեն հայրենասիրական երգերի մի ամբողջ շարք ուներ «Վերջերս սկսած և մամբողջովին Հայաստանի վրա հատոր մը պատրաստել» (էջ 57), — գրում է Վարուժանը Թեքեյանին 1906 թ. մարտի 3-ին և այդ շարքից «Շիրակի» համար ուղարկում երեք հայրենաշունչ Բանաստեղծություն («Կովի Լիթ», «Հայկական օրոցքը», «Արծիվներու կարավանը»)։

Այնպես որ, երբ ընթերցողը ստացավ «Սուրսուռները», Վարուժանն արդեն ինքն իրենից առաջ էր անցել։

1907 թ. Փարիզում Չոպանյանը լույս ընծայեց Դանիել Վարուժանի «Ջարդը» պոեմը, նախ «Անահիտ» հանդեսում, ապա՝ 1908 թ. առանձին գրքով։ Դա Վարուժանի 2-րդ գիրքն էր։

«Ջարդը» պոեմը, որ և՛ Վարուժանը, և՛ Չոպանյանը «ընդարձակ քերթված» են համարել, գրվել է 1906 թ. ամռանը, ուսանողական արձակուրդների ժամանակ, երբ Վարուժանը հանգստանում էր Վենետիկի մոտ գտնվող Ազոլո գյուղում։ Այնտեղից 1906 թ. սեպտեմբերի 6-ին գրված նամակում Վարուժանը Չոպանյանին հաղորդում է. «Երկայիս գրած և մը ընդարձակ քերթված մը, ուր «Ջարդին» ընդհանուր և բնորոշիչ մեկ փոքր նկարն է» (էջ 77)։ «Ջարդը» պոեմի (գրքի) տակ Վարուժանը հենց այդ ժամանակն էլ նշել է՝ 30 օգոստոսի 1906 թ.։

Անմիջապես և այն էլ առանձին գրքույկով տպագրելու մեծ փափագ է ունեցել նաև հեղինակը. «Այս կտորը առանձին տպագրված տեսնելու անհամբեր և մ» (էջ 107)։ Վարուժանը այն ուղարկում է ուսանողական միությունը, սակայն այդ միությունը ցրվում է։ «Անահիտում» և ապա առանձին բրոշյուրով տպագրելու առաջարկ է անում Չոպանյանը։ Եվ Վարուժանը մեկ տարի հետո, 1907 թ. հունիսին ուղարկում է նրան։ Այդ մեկ տարվա մեջ այն բավականաչափ մշակել և հղկել էր։ «Ջղայնությունս և passion-ը դոր քերթվածներուս առաջին օրենքը կնկատեմ, ինձ շատ դյուրին ներշնչած են այս կտորը, բայց անոր ամբողջական և ներդաշնակ կազմություն մը տալու բավական աշխատած և մ», ավելի ուշ՝ «քանի մը փոքր, բայց խիստ կարևոր փոփոխություններ մը տցուցած և մ անոր մեջ», — վկայում է հեղինակը (էջ 107)։

Հունիսի 11-ին Չոպանյանը պատասխանում է. «Ձեր նամակն ու քերթվածը ըստացա։ «Անահիտ»-ի հունիս—հուլիս—օգոստոս—սեպտեմբեր թիվերը միասին պիտի երևան. այդ հատորին համար արդեն պատրաստ նյութերու խճողված տեղ մը կա, և անոր մեջ Ձեր քերթվածին դժբախտաբար տեղ չի

մնար, բայց հոկտեմբեր—նոյեմբեր—դեկտեմբեր թիվին մեջ պիտի հրատարակեմ դայն մեծ հաճույքով և 500 օրինակ ալ հետո հատորի ձևով» (էջ 252)։

Նշված համարում էլ (1907 թ. № 10—11—12) լույս տեսավ «Ջարդը»։ Այն բնթերցողին է հասել, սակայն, 1908 թ. հունվարին. «Անահիտը» լույս կտեսնի քանի մը օրեն։ Գրքույկնիդ կստանաք 10 օրեն», — գրում է Չուպանյանը 1908 թ. հունվարի 23-ի նամակում (էջ 261)։ Հունվարի վերջին (կամ թերևս փետրվարի առաջին) օրերին, Վարուժանը ստանում է «Անահիտի» այդ համարը (էջ 130)։

Իսկ փետրվարի վերջին տասնօրյակում Վարուժանը ստանում է «Ջարդը» նաև առանձին գրքույկով՝ «Սարսուռներ»-ի տպաքանակը 500 էր, նույնքան էլ որոշվում է «Ջարդ»-ի համար, սակայն տպագրիչ Տողրամաճյանը թյուրիմացաբար տպագրում է 450 օրինակ։

1905—1908 թթ. ընթացքում Վարուժանը գրում է հայրենասիրական բանաստեղծությունների մի ամբողջ շարք, որոնց շատ մասը հրատարակում է մամուլում։

1908 թ., «Ջարդի» գտած ընդունելությունից ոգևորված, Վարուժանը որոշում է հրատարակել ժողովածու՝ կազմված հայրենասիրական այդ բանաստեղծություններից։ 1908 թ. մայիսի 25-ի նամակով նա հայտնում է Չուպանյանին, թե որոշել է քննությունները հուլիսին հանձնել, որպիսզի 2 ամիս աղատ լինի բանաստեղծությունները «կարդի դնելու և ձմռան սկիզբը հրատարակելու ամբողջովին»։ Եթե «Ջարդ»-ը ծախվի վերջանա, պիտի միացնեմ հավաքածուին։ Հուսամ թե դեռ քանի մը կտոր ալ նոր կգրեմ, բելորուլին կարդացված հատոր մը լույս չընծայելու համար։ Եթե մեկնեա մը գտնեմ, կուղեմ շքեղ հատորով մը վերջ դնել հայրենասիրական քերթվածներուս» (էջ 138)։

Չուպանյանը խոստանում է օգնել նրան այդ հարցում, և Վարուժանը գործի է անցնում։ Կազմում է այդ ժողովածուն, գրում է նոր բանաստեղծություններ⁹։ Սեպտեմբերին Չուպանյանը Վարուժանին հայտնում է, որ առայժմ գրքի հարցը հետաձգված է։ «Ձեր գրքին հրատարակության համար մտադիր էի Հայկական միության դիմել, բայց այժմ կացությունը տակն ու վրա եղավ, այժմ մեր բոլոր ընկերները համաձայն են որ մեր ամբողջ դրամագլուխը պետք է ղրկել հայրենիք, հավանականաբար (իմ կարծիքս է) Միացյալ ընկերությանը օգնելու» (էջ 269)։

Պատրաստվում է Պոլիս մեկնել նաև Չուպանյանը։ Հաջողություն մաղթելով նրան, Վարուժանը հույս է հայտնում, թե նա այնտեղ կբանակցի «հրատարակչի մը հետ հատորիս հրատարակելուն համար» (էջ 152)։ Չուպանյանը խոստանում է ամեն կերպ օգնել նրան։ «Չուպանյան հույս կուտա, թե Պոլսո մեջ անտիպներս հրատարակել պիտի հաջողցնեմ միակ հատորի մը մեջ» (էջ 166), — հայտնում է Վարուժանը ընկերոջը նոյեմբերին։

Վարուժանը կազմում է գրքի նախնական ցանկը, կստարում շարքերի բաժանումները։ Ժողովածուն վերնագրում է՝ «Վրեժին բուրմեր»։ «Նեմեսիս» նախերգանքից հետո գնում է երեք շարքեր՝ «Վրեժին բուրմեր», «Զոհերու բազինին վրա», «Զինված առաքյալներ»¹⁰։

⁹ «Ցեղին սրտի» մեջ «Հառաչարանը» փոխեց «Նախերգանքի»։ Իսկ «Արձանը» «Նեմեսիս»։

¹⁰ ԳԱԽ, Դ. Վարուժանի ֆոնդ, N 36։

Այնուհետև սկսվում են մեկենաս գտնելու հոգսերը: Վարուժանը գիմում է Քաղկեդոնի վարժարանի իր սիրելի ուսուցչին՝ առաջին երգերը խմբագրող և քաջալերող Քասգանդիլյանին, խնդրում է Պոլսի հարուստներից մեկենաս դրու-
նել (էջ 221):

Վարուժանին սաստիկ հուզել է իր այդ վիճակը. «Մեկենաս մը գտնել կու-
ղեմ: Հիմա կհասկնամ, թե որքան անիծված են զրագետները. մոր մը աղեղա-
լար երկունքովը կծնանին իրենց երկը, իրենց զավակը, և տունը զգեստ շունին
որ զայն պճնեն, արեին լույսին, զևպի դաշտերը հանեն այդ դաշտերու
որդին...» (էջ 168):

Անցնում են ամիսներ, գալիս է 1909 թ., սակայն մեկենասը չի գտնվում:
Փետրվար թվակիր նամակում նա գրում է ընկերոջը. «Հայրենասիրական քերթի-
վածներս մի դարմանար զեռ միակ հասուորով մը հրատարակված չըլլալուն. ժո-
ղովրդին մտերիմ բանաստեղծն ըլլալու համար դրամ պետք է. «աղբատները
երգ շունին» (էջ 170):

Թևոդիկը նամակով նրան խորհուրդ է տալիս «առի առնել ուռնակը Վենե-
տիկո վանքի դռան», գտնելով, որ Վենետիկի վարժարանը պիտի պարծենա
նրա նման «սան րնթերցավարտ ունենալուն» (էջ 280), բայց Վարուժանը «Սար-
սուռներին» տպագրության պատճառով վրդովված ու նեղացած էր. նա հույսը
կապել էր Պոլսի հետ: Սակայն այնտեղ էլ տեղի էին ունենում նոր իրադարձու-
թյուններ: Կիլիկիայում ապրիլին եղած ջարդերը փոթորկեցին նաև Վարուժա-
նին: «Կիլիկիայի ջարդը ճմլեց աղիքներս: Ցեղին հոգին արյուն կուլա մեջս,
հրդեհված քաղաքներեն եկող ամեն լուր տաք մոխրի պես կթափի զլուխս և
սրտիս վրա» (էջ 174): Կիլիկյան զեպքերը կրկին շիկացնում են նրա գրիչը՝
ստեղծելու մի քանի կրակոտ քերթվածներ, որոնք մտնում են 1908-ին կազմված
հատորի մեջ:

Անցնում են ամիսներ, Վարուժանը ավարտում է Գենտի համալսարանը,
Վենետիկով մեկնում Պոլիս, ապա հայրենի գյուղ: Եվ 1909 թ. աշնանը, երբ
բանաստեղծը Սեբաստիայի Արամյան աղգային վարժարանի ուսուցիչ էր, Պոլ-
սում սկսվում է նրա վերահիշյալ հատորի տպագրությունը: Հրատարակությունը
իրագործում է «Արծիվ դրավաճառանոցը», «Մատենաշար Ազգակ» մատենա-
շարով:

Եվ ի վերջո, տարիների տառապանքից հետո, 1910 թ. դարնանը լույս է
տեսնում այն՝ «Ցեղին սիրտը» վերնագրով¹¹: Վարուժանը փոխել էր ինչպես
գրքի սկզբնապես որոշված վերնագիրը («Վրեժին քուրմերը»), այնպես էլ երեք
շարքերի նախորդ անվանումները («Վրեժին քուրմերը», «Զոհերուն բազինին
վրա», «Զինված առաքյալներ»): «Ցեղին սիրտը» բացվում է «Զոհ» բանաս-
տեղծությամբ, ապա նախերգանք «Նեմեսիսն» է (որը կար նաև առաջին տար-
բերակում), հետո 3 բաժանումներ՝ «Բազինին վրա», «Կրկեսին մեջ» և «Դյու-
ցազնավկայեր»:

Գրքի վրա տպագրված է 1909 թ.: Սակայն այն, ինչպես ասացինք, լույս
է տեսել 1910 թ.: Այս պարագան շփոթության մեջ է գցել ոմանց՝ ասելու, թե
1909-ին տպված «Ցեղին սրտի» ցած հաջողությունը նույնատեղ, որ «1910 թ.
այն վերահրատարակվի»: Այդպիսի բան, իհարկե, չի եղել: Պարզապես սկզբի
էջերը (որի վրա և թվականը) տպագրվել են 1909-ի աշնանը, իսկ գիրքը լույս

11 Դ. Վարուժան, Ցեղին սիրտը, Կ. Պոլիս, 1909:

է տեսել 1910 թ. դարնանքի Ամենայն հավանականությունյամբ հենց Վարուժանն է կամեցել, որ գրքի վրա գրվի 1909 թ., քանի որ նյութով և հղացումով այդ գիրքը մինչև 1909 թ. արգասիք էր: 1909-ին նա արդեն, ինչպես ասում են, փակել էր հաշիվները «հայրենասիրականներու» հետ, սկսել էր գրել նոր, իրենց բնույթով բոլորովին տարբեր շարքեր: Վարուժանը կամենում էր, որ այդ գրքով ամփոփի իր ստեղծագործական կյանքի 1905—1908 թթ. շրջանը: Իսկ հատուրը, ինչպես «Սարսուռները», ուղացավ: Երբ այն լույս տեսավ, Վարուժանը դարձյալ առաջ էր բնկել իր գրքից: Վարուժանի կարծիքով «Սարսուռները» պիտի լինեի 1905, իսկ «Ցեղին սիրտը»՝ 1909 թվակիր:

«Ցեղին սիրտը» ընթերցողին հասավ 1910 թ. սկզբին, սակայն այն ավարտված էր 1908-ի վերջերին (մի երկու բանաստեղծություն ավելացավ 1909-ի սկզբին): Դա բանաստեղծության շրջանի տրամագրությունների արտահայտությունն է, զենտյան տարիների հանրագումարը:

1909 թ. աշնանից մինչև 1912 թ. աշունը Վարուժանը ապրեց Սեբաստիայում և Թորոստում: Ուսուցչական, հասարակական ու տնտեսական հոգսերը խլեցին նրա ժամանակը, սակայն բանաստեղծն այնուամենայնիվ երկնեց իր նոր շարքերը: Ու մինչև կապտաստեր հաջորդ ժողովածուն, Սեբաստիայի «Հողդար» թերթը մատենաշար է հիմնում և որոշում է այն սկսել Վարուժանով: Եվ առանձին գրքույկով 1911 թ. Սեբաստիայում (տպագրություն «Հողդարի») լույս է տեսնում Վարուժանի «Տրտունջը» ընդարձակ քերթվածը, որը նվիրված էր Եղիա Տեմիրճիպաշյանին: Մատենաշարը Վարուժանով սկսելը հրատարակչները արդարացրել էին գրքույկի վերջում տրված փոքրիկ ծանոթությունյամբ. «Մատենաշարը կբացվի անգուղական Վարուժանով՝ արդիացված դասական դպրոցին պետովը»: Վարուժանը բնութագրվում էր որպես «տաղանդ մը կշռավոր, խնամված, տերը իր գրածին, իր երգին»:

«Տրտունջը» Վարուժանի տպագիր երրորդ գիրքն էր: Այն նոր շարքերի երգերից էր, որ ձևոնարկել էր Վարուժանը 1908-ի վերջերին: Այդ նոր շարքերը «Գողգոթայի ծաղիկներն» ու «Հեթանոս երգերն» էին, որոնք ի վերջո լույս տեսան 1913 թ. սկզբում՝ «Հեթանոս երգեր» ընդհանուր խորագրով:

Այս ժողովածուն, որ իր բնույթով, թեմատիկ ընդգրկմամբ միանգամայն տարբերվում էր նախորդ ժողովածուից, նոր որակ էր Վարուժանի ստեղծագործության մեջ: Ժողովածուի առանձին բանաստեղծություններ գրվել են դեռևս 1906-ից սկսած: Այսպես օրինակ, 1906 թվակիր են «Առաջին մեղքը», «Խեղդված միջատը», 1907՝ «Օրհնյալ ևս դու ի կանայս», «Լքում», 1908՝ «Լույսը», «Գիրքերուն մեջ» և ուրիշ բանաստեղծություններ: Գրքում տեղ է գտել նաև 1904-ին գրված «Աստծո լացը» բանաստեղծությունը: Այս փաստը վկայում է, որ «Հեթանոս երգեր» գիրքը և հատկապես «Գողգոթայի ծաղիկներ» շարքը իրենց արմատներն ունենին Վարուժանի առաջին շրջանի ստեղծագործության մեջ. ավելին, դրանք էությունյամբ նույնն են. տարբերությունը կատարելության մեջ է թերևս: Եվ այն, որ տարբեր տարիների բանաստեղծություններ կան այս գրքում, վկայում է, որ բանաստեղծի ստեղծագործության մեջ խզում չի եղել:

Նոր գրքի, նոր շարքերի ստեղծման գաղափարը, սակայն, ծնվել է 1908-ին: «Հեթանոս կյանքը օրեօր զիս կգրավե. Եթե այսօր կարելի ըլլար կրոնքս կփոխեի և սիրով կընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը» (էջ 131), — կարդում

Լնք 1908 թ. հունվարին զրաժ մի նամակում, իսկ Երկու ամիս հետո գրում է. «Մտքիս մեջ բունի մը քերթողական ծրագիրներ կան զոր Երգելու համար ազատ ժամանակ մը միայն կարևոր է ինձի» (էջ 133)։

Մայիսին Չուպանյանին հայտնում է որոշումը. «Արդեն ծրագիր զրաժ և՛ բանաստեղծությանց ուրիշ շարքի մը, բոլորովին մտերմակամ և ապրված» (էջ 138)։ 1908-ի նոյեմբերին արդեն որոշում է շարքերից մեկի վերնագիրը. «Պիտի սկսիմ պատրաստել Գողգոթայի ծաղիկներու շարքը, որ միայն ճշգրիտ կյանքը պետք է վերլուծեմ և Երգեմ» (էջ 165)։ 1909-ի գարնանը նա արդեն աշխատում էր այդ հատորի վրա։ «Հիմա նոր հատոր մը պատրաստելու ձեռնարկած և՛ զուտ ապրված կյանքե, քիչ մը ավելի վերլուծող, ավելի խորիմաստ և հոգեբանական Երգերով» (էջ 172)։ 1909-ի վերջերին (արդեն Սեբաստիայում) Վարուժանը որոշել էր նաև զրքի վերնագիրը։ Չուպանյանին հայտնում է, թե նոր քերթվածները «պիտի կազմեն «Հեթանոս Երգերուն» մասը» (էջ 183)։

«Հեթանոս Երգեր» զրքի հիմնական մասը Վարուժանը գրում է 1910—1912 թթ. ընթացքում, ասել է՝ Սեբաստիայում և Թոքատում աշխատելու ժամանակարնթացքում։ Տպավորությունները և ծրագրերը բերում էր Գենտից, Բայց հղացման իրազործումը Եղավ հայրենի դավառում։ «... Տեսած էի Եվրոպան։ Օգտվելով տեղվույն հսկա զրադարանն կարգացել էի հնդիկներեն մինչև Հոմեր և Հոմերեն մինչև Մետերլինկ։ Հոգիիս վրա բոցի մը լեզվին պես զգացած էի բանվորներուն աղաղակները մեկ կողմեն, ու մյուս կողմեն շվայտ ու արբեցող կյանքը... Բարոյիկ համարված փարթամ ընտանիքներուն։ Եվ ահա ասոնք բոլորը ստորագծված հիշողությանս մեջ և միացուցած հին հոռմեական կյանքին վերհիշումներուն, հանդեցա զրել, Երբ որ Երկիր, իմ գլուխս վերադարձա, «Հեթանոս Երգերը»։

1912 թ. ամռանը Վարուժանը տպագրության է հանձնում «Հեթանոս Երգեր» ժողովածուն, որի հրատարակչական ծախսերը իր վրա է վերցնում ռուստովցի մի զրասեր՝ Հովհաննես Պալյանը։ Նրան է ձեռնել Վարուժանը ժողովածուի վերջին բանաստեղծությունը՝ «Մատյանն ահա» վերնագրով։

Մի զարմանալի զուգահեռությամբ «Հեթանոս Երգեր» զիրքն էլ, նրա մյուս զրքերի նման, տարեվերջյան ծնունդ է, որ ընթերցողին հասավ հաջորդ տարվա սկզբին։ Գրքի վրա զրված է 1912 թ., սակայն ընթերցողն այն ստացել է 1913-ի սկզբում։ Այդ ևն հաստատում ինչպես զրքի մասին լույս տեսած զրախոսությունները, այնպես էլ հայտարարություն-ծանուցումները։ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի նախկին աշակերտների միության (որի անդամն էր նաև Վարուժանը) «Ամսօրյա տեղեկատու» հանդեսի 1913 թ. հունվար—փետրվար—մարտ ամիսների միացյալ համարի 3-րդ էջում կարդում ենք. «Շնորհակալությամբ ընդունեցանք մեր հարգելի ընկեր և ծանոթ բանաստեղծ տիար Դանիել Վարուժանի «Հեթանոս Երգեր» անուն վերջին հրատարակությունը... հեղինակի կողմն միությանս մատենադարանին նվիրված»։ Պարզ է, որ իբրև միությանը Վարուժանը զիրքը նվիրել է լույս տեսնելուց անմիջապես հետո։ Եվ հանդեսն էլ իրենց Վարուժանի զիրքը պիտի զրախոսեր անմիջապես։ Այդ իսկ համարում զետեղված է Թ. Նսալյանի զրախոսությունը։

1913 թ. մարտյան համարում է ծանուցում տպագրել նաև «Հայ զրակա-նություն» ամսագիրը. «Ստացանք. «Հեթանոս Երգեր».— տաղանդավոր բանաստեղծ Դանիել Վարուժանի 1909—1913-ի քերթվածներու ստվար հատոր

մր»։ Գրախոսությունը լույս է տեսնում մալիսյան համարում։ Իսկ «Հեթանոս երգերը» այն դրքերից էր, որոնց մամուլը անմիջապես է արձագանքում։

Անավարտ մնաց Վարուժանի ծրագրած բանաստեղծական նոր շարքը՝ «Հացին երգը», որն առանձին գրքով (այդպես անավարտ) լույս տեսավ ետմահու, 1921 թ.։

«Հացին երգը» վերնագրով շարք ստեղծելու դադարի արդյունքում Վարուժանը հաջել էր ղեկն ուսանողական տարիներին։ Իր այդ ծրագրին անշուշտ ծանոթ են եղել մտերիմ ընկերները, քանի որ 1909 թ. նոյեմբերին Սեբաստիայից ուղարկած իր նամակի մեջ նա ընկերոջ՝ Գ. Գրլըճյանի հարցին պատասխանում է. «Հացին երգը» դարձան դեմ պիտի սկսիմ» (էջ 180)։

Սակայն «դարձան դեմ» և հաջորդ երկու տարին Վարուժանն ամբողջովին նվիրվում է «Հեթանոս երգերի» ստեղծմանը, որի տպագրությունից հետո միայն սկսում է «Հացին երգը»։ Այս շարքից առանձին բանաստեղծություններ լույս են տեսնում 1913—1914 թթ. մամուլում։ Վարուժանը նպատակադրվում է 1914-ին ավարտել այն և առանձին գրքով լույս բնագրել 1915-ի դարձանը։ 1914 թ. մարտին դրած նամակում նա տեղեկացնում է. «Այժմ կգրեմ «Հացին երգը», որ հուսամ տարիս մը լույս կտեսնեն», իսկա բացատրում է՝ «այդ հատորին մեջ երգված պիտի ըլլան հայրենի հողը, մշակներու սշխատությունը և դյուղական կյանքի խաղաղ մեծությունները» (էջ 208)։

Ուրեմն «Հացին երգը» գրվել է 1913—1915 թթ. ընթացքում (գուցե որոշ երգեր նաև 1912-ին), բայց ոչ ավելի վաղ։ Հավաստի չէ Մկրտիչ Պոտուրյանի այն հուշը, թե Վարուժանը «Եղիի» (1904 թ.) «ամեն թիվի մեջ գեղեցիկ ոտանավորներ կը ստորագրեր», որոնք «գրեթե բոլորն ալ «Հացին երգը» հատորին մեջ լույս տեսան»¹²։ «Եղի» ձեռագիր գրական հանդեսում, որ լույս էին ընծայում Մուրադ-Ռաֆայելյանի աշակերտները, Վարուժանը իրոք գրել է արձակ ու չափածո գործեր, նույնիսկ քննադատական, երգիծական հոգվածներ, Զիր-դուշտ կեղծանունով։ Վարուժանի ձեռագրերի մեջ պահպանվել են «Եղիի» համար գրված այդ հոգվածների սևագիր էջերը (թղթապանակ № 5—6, 14)։ Ծիշտ է, այդ բանաստեղծությունների ձեռագրերը չեն պահպանվել, բայց պահպանվել են նույն թվականներին գրված գրեթե բոլոր բանաստեղծությունները «Մրկահույզ կայծոռիկներ» և «Փուշի ակոսներ» տետրերում։ Իսկ դրանց մեջ «Հացին երգը» շարքից ոչ մի գործ չկա։ Եվ, վերջապես, բանաստեղծական այն վարպետությունը, որին հասավ Վարուժանը կյանքի վերջին տարիներին և որի արդյունքը եղավ «Հացին երգը», անշուշտ նա չէր կարող ունենալ 1904-ին, երբ պատրաստվում էր հանդես դալ առաջին տպագիր գրքով։ «Հացին երգը» հասարակական-քաղաքական ուրիշ պայմանների արդասիք է։ 1915-ի ապրիլին Վարուժանին աքսոր են տանում։ Ոստիկանությունը բռնադրավում է նրա ձեռագրերը, որոնց մեջ նաև «Հացին երգը» անավարտ շարքը։ Պատերազմի ավարտից հետո, 1919 թ. Վարուժանի այրին՝ Արաքսյա Թաշճյանը, կաշառելով գրաքննության աշխատողին, գտնում է «Հացին երգը» այն ներքնահարկից, որտեղ պահվում էին հայ գրողների բռնադրված ձեռագրերը։

Այդ մասին է ակնարկված նաև գրքի սկզբում գրված «Երկու խոսքում»։ «Գրաքննության մոտ ծառայող տխրահույզ հայու մը անմեկնելի պատրաստակամությունը և, մյուս կողմն, կատարված նյութական որոշ զոհողություն մը հաջողեցան ետ խլել այս գործը»։

¹² «Հուշեր», Կահիրե, 1958, № 118 և «Էջմիածին», 1958, թիվ Ը։

«Հացին Երզնի» տպագրությունը ստանձնեց «Նավասարդ» նորաստեղծ միությունը, որ կազմված էր վարուժանական արվեստի երկրպագուներից: Միությունը «Հացին Երզնի» «հրատարակությանն ի նպաստ» 1921 թ. մայիսի 19-ին կազմակերպեց դրական մի ճոխ ցերեկույթ: «Հացին Երզնի» լույս տեսավ 1921-ին: Գրքում, վարուժանի սահմանած հաջորդականությամբ, դրված էր 24 բանաստեղծություն: Առաջաբանում ասվում էր, որ վարուժանի ծրագրած շարքից բացակայում է վերջին 6 երգը, «որոնց վերնագրերը նշանակված գտանք բանաստեղծին գրպանի տետրակներուն մեջ հետևյալ շարադասությամբ,— «Ալյուր», «Լիսոռ», «Թիխմոր», «Փուր», «Հայրենի սեղան» և «Հացին Երզնի»:

Վարուժանի, ինչպես կենդանության օրոք, այնպես էլ հետագայում տպագրված գրքերից դուրս են մնացել բազմաթիվ բանաստեղծություններ ու արձակ էջեր: Եվ այսօր, երբ նրանում է գտնվում բանաստեղծի հարուստ արխիվը, երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը դառնում է առաջնահերթ խնդիր, որի իրականացմանը ձեռնամուխ է եղել ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը:

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ КНИГ ДАНИЕЛА ВАРУЖАНА

В. А. ГАБРИЕЛЯН

(Резюме)

В статье говорится об истории создания сборников Варужана (изданных и неизданных). Уточнен ряд дат и фактов, которые дают возможность глубже понять и выяснить пути его творчества. История зарождения и издания книг Варужана изложена на основании материалов, хранящихся в Музее литературы и искусства им. Е. Чаренца, а также сборника писем Варужана, изданного в 1965 г., и сведений, сообщаемых мемуаристами.